

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
«Շահող կտրոն» վիճակահանության արդյունքների մասին

ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարների 2009 թվականի փետրվարի 6-ին կայացած վիճակահանության արդյունքում հայտնի դարձած շահող թվերն են (առաջին նիշից սկսած հաջորդական հերթականությամբ)՝

7 6 2 0 1 8 4 3

2009 թվականի փետրվարի 6-ին կայացած վիճակահանությանը մասնակցում են միայն 2009 թվականի հունվարի 1-ից մինչև 31-ը ներառյալ քաղաքացիների կողմից ստացած ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարները:

Շահող կտրոններ են համարվում այն կտրոնները, որոնց առաջին 4, առաջին 5, առաջին 6, առաջին 7 կամ առաջին 8 թվերը համընկնում են վիճակահանության արդյունքում հայտնի դարձած թվերին՝ ըստ հաջորդական հերթականության:

Քաղաքացիները շահումները կարող են ստանալ 2009 թվականի փետրվարի 9-ից մինչև 28-ը ներառյալ բանկերի բաժանմունքներում, անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, ներկայացնելով նաև անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և կտրոնի բնօրինակը:

Շահում եք Դուք, շահում է պետությունը

ՎԻՃԱԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ